Ինչ վերաբերում է պատասխանողի ներկայացուցչի մյուս փաստարկներին, ապա դրանք ամբողջությամբ հերքվում են Դատարանի վերոգրյալ իրավական վերլուծությամբ և պատճառաբանությամբ, ուստի կրկին չի անդրադառնում դրանց:

6. Դատական ծախսերը.

Անդրադառնալով դատական ծախսերի բաշխման հարցին՝ դատարանն արձանագրում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ օրենսդիրը դատական ծախսերի բաշխման հիմքում դրել է համամասնության սկզբունքը, որը պետք է համապատասխանի բավարարված հայցապահանջին:

Դատարանը, նկատի ունենալով, որ հայցվորը հայցադիմումը դատարան ներկայացնելիս վճարել է օրենքով նախատեսված պետական տուրքի գումարը, իսկ հայցը ենթակա է մերժման, ուստի Դատարանը գտնում է, որ պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

Անդրադառալով կիրառված հայցի ապահովման միջոցի հարցին՝ Դատարանը գտնում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 191-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանը վճիռ կայացնելիս լուծում է հայցի ապահովման միջոցները պահպանելու կամ վերացնելու հարցը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցը մերժելու մասին վճիռ կայացվելու դեպքում հայցի ապահովման միջոցները պահպանվում են մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Դատարանը, նկատի ունենալով, որ հայցն ենթակա է մերժման, գալիս է այն եզրահանգման, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 10.12.2024 թվականի որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը պետք է պահպանել մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելը, վճռի օրինական ուժի մեջ մտնելուց հետո պետք է այն վերացնել:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ, 191-րդ, 192-րդ, 234.5-րդ, 234.12-րդ հոդվածներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. Մասիսի Գարուն Կարի ֆաբրիկա ՍՊ ընկերության հայցն ընդդեմ ՀՀ Ներքին գործերի նախարարության՝ կողմերի միջև 13.06.2024 թվականին կնքված թիվ «ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2024ՀԴՁ3-3» ծածկագրով գնման պայմանագիրը ՀՀ ներքին գործերի նախարարության կողմից միակողմանի մասնակի լուծելու մասին 02.12.2024 թվականի որոշումն անվավեր ճանաչելու

պահանջի մասին, մերժել:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 10.12.2024 թվականի որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը պահպանել մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելը, վճռի օրինական ուժի մեջ մտնելուց հետո այն վերացնել:

4. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել Վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Աննա Ճիլաջյան**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am